



2020 թվականի հունիսի 1

Բարև LACC ընտանիք,

Սթափեցուցիչ հանգստյան օրեր էին: Ուրբաթ օրը մենք հարվածեցինք ԱՄՆ-ում COVID-19-ի 100,000-ից ավելի մահացու դեպքերի ազգային ցուցանիշը: Դա LACCD-ում լրիվ դրույթով սովորող ուսանողների ընդհանուր քանակին համարժեք թիվ է: Այն բերում է ամեն ինչ ավերվածության: Պատկերացրեք LACC-ի յուրաքանչյուր ուսանողի, ինչպես նաև LACCD-ի մնացած ութ քոլեջների ուսանողների հետ միասին՝ մի օր նրանք այնտեղ են ... և հաջորդ օրը այլևս չկան: Դուք չէիք կարողանա տեսնել նրանց: Դուք չէիք կարող նրանց համար հուղարկավորություն ունենալ: Դուք չէիք կարող հրաժեշտ տալ նրանց: Ուրբաթ երեկոյան քաղաքապետ Գարսետին գեղեցիկ հարգանքի տուրք մատուցեց LACC ինֆորմացիոն տեխնոլոգիայի բաժնի ղեկավար Կաբլե Զանդայի համար: Եթե այն չեք տեսել, ահա հղումը՝ [https://www.facebook.com/MayorOfLA/videos/246602156436068`](https://www.facebook.com/MayorOfLA/videos/246602156436068) գնալով մինչև մոտավորապես 18:45-ը: Նա խոսում է Կաբլեի մասին մոտ երկու րոպե:

Համաճարակի հիասթափությունը, տանը մնալով ավելի ապահով լինելը, այն փաստը, որ մենք պետք է ավարտին հասցնենք մեր այս կիսամյակն առանց ուսանողների նվաճումները նշելու, մեզ բոլորիս մարտահրավեր է նետել: Բացի այդ, մենք պետք է մտածենք այն մասին, թե մեզանից յուրաքանչյուրը ինչ կարող է անել և միջոցներ ձեռնարկել այս դժվարին ժամանակաշրջանում օգնելու մեր համայնքներին և ավելի կարևորը, մարդկությանը: Մեր աֆրոամերիկյան համայնքը և շատ այլ մարգինալացված խմբավորումներ հոգնել են: Եվ շատ ճիշտ են արել: Պետք է ավարտվեն տասնամյակների ռասիզմը, դատարկ հռետորաբանությունը և անիմաստ սպանությունները: Բոլոր ձայները պետք է լսվեն, և պետք է տեղի ունենա իրական գործողություն, որը կհանգեցնի էական փոփոխության:

Առջևում շատ զբաղված շաբաթ է մեզ սպասվում՝ գարնանային կիսամյակի ավարտը, ավարտական քննությունները, ամառային կարճաժամկետ դասերին նախապատրաստվելը և այլն: Այսօր քոլեջի խորհուրդը կքվեարկի՝ հաստատելու 2020-2023 թվականների կրթական և ռազմավարական հիմնական ծրագիրը (ESMP): Ես հանձնաժողովին խնդրում եմ, որ արագորեն ստանձնի այդ գործընթացը, այնուհետև անցկացնի հանդիպման մնացած մասը՝ խոսելով առաջատար փոփոխությունների մասին: Մենք հիմա պետք է սկսենք խոսակցությունը:

Լավանդեր ավարտական վիրտուալ արարողությունը տեղի կունենա վաղը՝ երեքշաբթի, հունիսի 2-ին, ժամը 4:00-ին: Ահա արարողության հղումը՝

<https://lacc.zoom.us/j/99735728483?pwd=aXJaZExUUkZLYzU2MXJOUlhnTTI2QT09> Գաղտնաբառ: Lavender20

Երեքշաբթի, Յունիսի 9-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, մենք կունենանք LACC-ի վիրտուալ ճանաչման արարողությունը: Մենք ունենք հիանալի կազմ և այն լինելու է ներգրավող: Այնպես որ հուսով եմ, որ դուք կմիանաք մեզ:

Ամառային գրանցումը շարունակվում է: Եվ գրանցումը շատ բարձր է LACC-ի համար: Աշնանային դասերի դասացուցակը մատչելի է ձեր ուսանողական պորտալում: Այս շաբաթվա սկզբին մենք հղումներ կտեղադրենք մեր գլխավոր էջում: Գրանցումն սկսվում է երկուշաբթի՝ հունիսի 8-ին: Խնդրում ենք ձեր ժամադրության օրը գալուն պես գրանցվել անմիջապես, որպեսզի ապահովեք ձեր տեղը դասարանում Աշուն 2020-ի համար: Աշուն 2020-ի բոլոր դասերը կլինեն առցանց:

Մենք ունենալու ենք փոփոխված Դեկանի պատվո արարողություն այն ուսանողների համար, ովքեր Նախագահի և դեկանի ցուցակի վրա են: Մենք նախատեսում ենք արարողության հակիրճ վիրտուալ մի մաս ունենալ երկուշաբթի՝ հունիսի 8-ին: Ավելի մանրամասը տեղեկատվություն կուղարկենք քիչ ուշ:

Հաջորդ երկուշաբթի օրը պաշտոնապես ավարտվում է մեր Գարուն 2020-ի կիսամյակը: Չնայած այս կիսամյակում զգալի փոփոխություններ տեղի ունեցան, բայց ես հուսով եմ, որ դուք գիտեք, որ մենք այստեղ ենք ձեզ համար, և դուք կդիմանաք, և կշարունակեք դեպի ավարտը: Գիտեմ, որ սա ձեզանից յուրաքանչյուրի համար դժվարին ժամանակ է եղել: Եվ որ Ջորջ Ֆլոյդի դիտավորյալ սպանությունն էլ ավելի է այն բարդացրել: Վստահ եմ, որ միասին մենք կարող ենք գտնել մի ճանապարհ օգնելու ձեզ՝ մեր ուսանողներին, մեր ֆակուլտետին, մեր աշխատակազմին, մեր ադմինիստրատորներին և մեր համայնքին այս ողբերգական ժամանակահատվածում:

ՀԱՎԱՏԱ, ՆՎԱՃԻՐ, ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԻՐ

Լավ և ապահով եղեք:

Մերի Գալագեր

Նախագահ

Լոս Անջելեսի Քաղաքային Քոլեջ

Խնդրում ենք այցելել [LACC](#) կայք՝ այս հաղորդագրությունը հայերեն, կորեերեն, ռուսերեն և կամ իսպաներեն լեզուներով կարդալու համար

Please visit the [LACC website](#) to view this message in Armenian, Korean, Russian, or Spanish.

Посетите LACC [website](#), чтобы просмотреть это сообщение на Армянском, Корейском, Русском или Испанском языках.

Para ver este mensaje en español, favor de visitar el sitio web de [LACC](#)